

ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ

ՀՍ.ԻԱՍՍ.ՐԱԿԵՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՐԻՇԵՒԱՆՈՒԹԻՒՆ

Պատմութիւնն ճոխ և բազմաբեղուն ու սուցիլ մ'է մարդկան և աշխարհի գործոց, միայն թէ գիտանանք քննել և ուսանել զայն: Մարդկային արարք կրկնութիւն մ'էն անընդհատ, նման բայց ոչ նոյն կերպով: Մարդ իբրև էակ բանաւոր և ընկերական կը կառավարուի 'ի բնական օրինաց, որոնք յինքնանս մտածեալ՝ անփոփոխելի ու անսլալալելի են: Բայց այս օրինաց հետ կը զուգընթանան մարդկային ազատութիւնն և կամաց զօրութիւնն, յատուկ ամենայն մարդոյ: Այս երկու հակառակամարտ տարերց մէջ կեցած են ընկերական վարդապետութիւնք, յորոց ոմանք ստոյգ հիման վրայ կը յենուն և կը կազմեն զգիտութիւնս, և այլք անստոյգ՝ և ունին առաջնորդ զկարծիս և զմիաս իւրբանչիւրոց: Մարդկութեան իրական ընթացքն ուրիշ բան չէ՛ բայց եթէ հետեւութիւն ու բազազրութիւն այս զանազան տարերց: Եւ որովհետև մարդկային բնութեան հիմը միշտ նոյն է և անփոփոխելի, և զմարդ ընկերութեան մէջ կառավարող օրէնքներն կը տեսնն նոյն օրինակ, հարկ է հետեւաբար որ մարդկային արարք կրկնուին առաւել կամ նուազ մի և նոյն կերպով: այլ մարդոց հպատակ տարերց ազդեցութիւնն կրելուն, որ է բանաւոր, կամեցող և ազատ, անհնարին է նոյնութիւն: Եւ այս այսպէս է, ապա թէ ոչ հարկ էր մերժել մարդկային հոգւոյ ազատութիւնը: — Այս անհերքելի սկզբունքները դնելէն ետքը, հայեացք մը տանք պատմութեան, այն զանազանաձև, հաճոյական բայց միանգամայն ահաւոր թատերական խաղուն, զոր կը ներկայացնէ մեզ մարդկութիւնն:

Ի բաց թողով պատմութեան առաջին արշաւոյսը, այսինքն մարդուս արարչագործութեան նախկին երկու հազար տարին, ուր պատմութիւնք և աւանդութիւնք չեն այնչափ պայծառք և ստուգապատուք, սկսինք այն թուականէն որ կրնայ ստոյգ համարուիլ, այսինքն ասկէց չորս հազար տարի առաջ: Կը տեսնանք որ եր-

կրիս երեսն յար 'ի փոփոխութեան եղած է. ազգ մը ծնած է և ազգ մը մեռած՝ շարունակ փոխանակելով զերար. Ասորեստանայք և Փաղղեսայք, Եգիպտոսիք և Արաբացիք, Հայք և Պարսիկք, Յոյնք և Հռովմայեցիք, Բաբելոնացիք և Կարթեգոնացիք, ապա Հռովմայեցիք և Բարբարոսք, յետոյ Գաղղիացիք, Գերմանացիք, Իտալացիք, Սլաւոնացիք և Վնզղիացիք. ասոնք ամենքն ալ ընծայեն մեզ բազում ազգութիւնակ սոքոլորոց ծագման, զօրութեան, գերիշխանութեան և անկման: Մեծամեծ արարք որոց միջոցաւ կը փոխանցին մարդկային մեծութիւնք 'ի մի տկար ժողովուրդէնէ 'ի միւս զօրաւորագոյն (ժողովուրդ, կատարուած են միշտ մեծ քաղաքի մը մէջ, իբրև կենդրոնք մարդկային գործոց. Նիւնուէ և Բաբելոն, Թեբէ և Մեմփիս, Պերսեպոլիս և Անի, Աթէնք և Սպարտա, Հռովմ և Կարթագինէ, Մատրիտ և Վեննա, Լոնտոա և Բարիզ, Պետլին և Պետրպուրկ կը կրին ճակատնուն վրայ քառասուն գար այս մարդկային մակընթացութեան ու տեղատուութեան: Նշանաւոր ու մեծամեծ գործեր կատարուեցան Արևելք և Արևմուտք, բայց հիմա մեծագոյն ևս գործեր կը պատրաստուին 'ի Նորն Աշխարհ՝ յԱմերիկա, ուր Միաբան-Նահանգաց Հասարակապետութիւնն կը պատրաստուի տիրել կամ նախաթոռ բազմիլ բոլոր ամերիկեան ցամաքին, 'ի բեռնային սառուցից մինչև 'ի նեղուցն Մակելլանայ, և գուցէ կ'ուղղէ աչքերը փափաքանօք մինչև յարևմտեան ասիոնս Հնոյ Աշխարհին և յարևելեան կողմանս Ասիոյ:

Ասոնք իրական ճշմարտութիւններ են, զորոնք ճշմարելու համար՝ բոլորովին կոյր ըլլալու է. շարունակ այս կամ այն ժողովուրդն գերիշխան կը բազմի, կամ տեղի կու տայ բարբախտագունի մը, և կամ կը փորձէ բացարձակապէս առաւելուլ 'ի զօրութիւնս:

Մարդոյ և աշխարհի գործոց անընդհատ կրկնութիւնը ճանչնալով հանդերձ, կըր-

նանք նորէն անկանիլ 'ի վրիպանս, եթէ անոնց մէջ տարբերութիւն մը չի գննար: Քրիստոնէութեան բարգաւաճնէն առաջ կը գտնանք այնպիսի ժողովուրդներ՝ որ զօրաւոր կը ծնանին, կ'իշխեն այլոց վրայ, ապա կ'ընկնան և այնպէս կը շնչանան՝ մինչև հպրիս թէ կը թողուն հնագիտական մէկ քանի մնացորդներ իրենց հետոցը: Նորոյ ընկերութեան ձևանալէն վերջն ալ՝ որ պարզապէս քրիստոսական է, կ'երևնայ դարձեալ ժողովրդոց այդ փոփոխ գերիշխանութիւնն, այսու միայն զանազանութեամբ՝ որ ասոնք ալ թէպէտ կը կործանեն՝ բայց չեն մեռնիր կամ կորուստի, այլ երբէք երբէք կը վերականգնին 'ի կենդանութիւն, ճգնելով միշտ 'ի գերիշխանութիւն:

Գեռ զարմանային կայ: Նատ անգամ այս ազգերէն ոմանք ոտնակոխ եղան հզօրագունէ մը, սպառնալով մշտնջնաւոր ծառայութիւն. բայց ակա տկար գաւնակցեցան իրարու մէջ, և ստիպեցին զանախաւան կալ 'ի պարտուպատշաճան. և հաստատեցին հաւասարակշռութիւն մը, որպէս զի այլ ևս չվտանգի իրենց կեանքն: Գաշնակցութեանց պատմութիւնն, ուսկից ծնաւ ապա հանրագոյնի իրաւանց դիտութիւնն, վկայ է այս ճշմարտութեան:

Սրայպէս յամրաբայլ բայց սազնով ընթացիւ ժամանակաց, նիթական գերիշխանութեան՝ որ բնաջինկ կը կորուսանէր զիորձանեալն, յաջորդեց բարոյական գերիշխանութիւն, նոր տեսակ սկզբամբ մը: Հաւասարակշռութիւն անուամբ, և կոչեցաւ եւրոպական, Եւրոպոյ մէջ ծնանելուն կամ զօրանալուն համար, որ ժողովեց իր ծոցին մէջ հնոց քաղաքականութեան մնացորդները, կատարելագործեց զանոնք նորանոր տարերօք և սփռեց յերկոսին աշխարհս:

Մարդկային գործերն՝ անոնք մասնաւանդ որ 'ի բարոյական կարգի են, ոչ երբէք կատարելով կը ծնանին, այլ ժամանակն կուտայ կատարելութիւն. կ'երևին նախ իբրև պարզ մտաւորական տեսութիւն մը, ժամանակ անցնելով կը ձևակերպին և կը հասնին 'ի ծագ կատարելութեան: Նոյնն եղաւ այն քաղաքական սկզբուն ալ որ կոչի եւրոպական հաստարակշռութիւն: Երբ առաջին անգամ 'ի լոյս ընծայեցաւ՝ ուրիշ

բան չէր՝ բայց եթէ տեսակ մը խորհական մտածութիւն՝ մէկ քանի տէրութեանց գերիշխանութեան տակ, որ կը ճարտարապետէին զայն թարուն խորհրդով, գիտելով շարունակ իրենց անձնական գերիշխանութիւնը: Ապա Հաւասարակշռութիւնն մէկ քանի տէրութեանց զերիշխանութեան վրայ զրին, ժողովելով իրենց չորս կողմը բազում փոքր տէրութիւններ: Միշտ խաբէական էր այս ամենայն. և չի ճանչնալով մարդկային գաշնակցութեան բնութիւնը, ուրիշ անգամ մ'ալ հաստատեցին այն սկզբունքը՝ որ կ'ըսէ. « Իրք իրենց բնական վիճակէն դուրս ոչ կը յաջողին և ոչ ալ կը տևեն »:

Սակայն կարծես առ ժամանակ մի յաջողեցան. զանազան ժանրութիւններ ըլլալուն կէտոյն թաթից մէջ, քիչ մ'ատեն կրցաւ պտղաբերել այդ Հաւասարակշռութիւն: — Նոյն բանը պատահեցաւ նաբուլեոնեան հակայածն շինուածոյն կործանանէն ետքը յամին 1815: Բայց բնութիւնն մարդկութենէ և իր հայիներէն աւելի հզօրագոյն ըլլալով, հարկ էր որ տապալէր այս արուեստական կարգադրութիւնը, ճամբայ բանալով աղգագ ու ժողովրդոց ինքնայօժար միութեան ըստ սեփական բարուց 'ի բարեաւոյ և ըստ սահմանաց գծերց 'ի բնութենէ: Ազգութեան սկզբունքն ընդհանուր եղած է հիմա և կը տիրէ ամենուրեք, վստահ որ պիտի ստանայ վերջապէս որոշիչ յաղթութիւն մը: Երանի թէ յոյսով կայանար Հաւասարակշռութիւնն. այս սկզբունքն է որ կ'իշխէ հիմա, խափանելով առ սակաւ սակաւ որոգայթադիր մեքենաորութիւնները:

Երկու մեծազոր տէրութիւնք՝ Գաղղիա և Աւստրիա, հակառակեցան ընդ երկար այս նոր շարժման դէմ: Երկուքն մի և նոյն սկզբան կը հետևէին, վստահ զի օգտակար կը գատէին տկար տէրութիւններ և անմիաբան ազգեր ունենալ չորս կողմերին, որոնք արևածայկի պէս միշտ իրենց դարձած ըլլան: Ասկեց զուրութեամբ կրնայ հակադրուիլ թէ ինչո՞ւ բաժանեալ կ'ուզէին բռնել զիտալիա և զՌեյմանիա, մինչդեռ դարական ատելութեամբ միշտ 'ի գրգռութեան կէին այս ազգերն իրենց տիրապետողաց և նախանձորաց դէմ:

Աւստրիա յետ 1859 և 1866 ամաց այլի-

տաբեր պատերազմաց, ճանչցաւ իր հին վրիպակը, և ցուցուց յայտնապէս թէ հրա-
 փարեալ է անկէց: Բայց ոչ նոյնպէս և
 Գաղղիա. որ թէպէտ խորտակեցաւ, բայց
 կարծես չուզեր խոտտովանել տակաւին
 իւր վրիպակը, Քամանակս բուրբովին փո-
 խուած է, և ճշմարիտ իմաստութիւնն
 կը սորվեցնէ՝ որ պէտք է յարմարիլ ժա-
 մանակին և ոչ թէ յետս յետս ընթա-
 նալ: Գաղղիա կեցած է տակաւին անտե-
 ղիտալի կերպով իր գաղափարաց վը-
 բայ, և չուզեր 'ի բաց թողուլ իր աւան-
 դութիւնները. և այսպէսով այն ժողո-
 վուրդն որ ունի ուրիշ կողմանէ բազում
 տարերս մեծութեան և զօրութեան, կը
 պատճառէ զանկաւին իւր քաղաքական.
 կը զգայ ընդունած ցնցման սաստկութիւ-
 նը, և չի զգաստանար. հետամուտ է միշտ
 նորոյ կառավարութեան, տժգոհ երեկուան
 հաստատածին վրայ: Ի՛նչ էր 1870 ամին
 աղիտաբեր պատերազմին պատճառը, յո-
 բուժ գահավիժեցաւ բոլոր ազգն անհաւա-
 ստի կուրութեամբ և անխոհեմութեամբ՝
 ձգելով իրեն հետ և զկայսրն, որ զուցէ
 նախատեսներ էր ահազին վտանգը. նա-
 խանձն միայն ընդդէմ Վերմանդը, որ կը
 յառաջէր մեծաքայլ դէպ իր քաղաքական
 և ազգային կազմութիւնը:

Եթէ բախտն չնորհէր յաղթութիւն Գաղ-
 ղիոյ, Վերմանիա կը դառնար նորէն՝ ան-
 շուշտ իր նախկին վիճակին՝ բաժնուելով 'ի
 զանազան մասունս. և կամ նոր դաշնա-
 կցութիւն մը կը ձևանար հռենոսեան հպս-
 տակ Գաղղիոյ: Նոյնը կ'ըլլար նաև իտա-
 լիոյ վաղ կամ անագան:

Շատերն կը զարմանան տեսնելով Գաղ-
 ղիոյ մէջ օրինաւորական կուսակցութեան
 այն աստիճան զօրութիւնը, և սակայն
 պէտք չեն դարմանալ: Եւրոպիոյ մէջ
 Գաղղիան է միայն որ չի ճանչնար ժամա-
 նակաց փոփոխութիւն, և չուզեր համա-
 կամութեամբ հաւասարիլ ուրիշ ազգաց,
 համարելով զայն նուաստութիւն: Ներկայ
 ժամանակիս մէջ յորում ամենայն ինչ կեր-
 պարանափոխ եղած է, կ'ուզէ ինքն սակէ
 երկու դար առաջուան կեանքն ունենալ,
 և կը համարի թէ կրնայ ձեռք բերել իր
 նախկին գերիշխանութիւնը: Գաղղիոյ թագը
 Լուզովիկոսի ԺԳի թոռնորդուոյն մատու-
 ցանելով, Գժուարին է, կ'ըսենք նաև ան-

կարելի՛ որ Գաղղիա կարենայ ստանալ
 Լուզովիկոս ԺԳի ժամանակուան ունե-
 ցածը:

Գժուարին է գուշակել թէ ի՛նչ ապագայ
 պիտի ունենայ Եւրոպա, որ Աստուծոյ
 և՛եթ է գիտելի և անօրինելի: Այսչափն
 միայն ստոյգ է որ Եւրոպիոյ հաւասարա-
 կչութիւնն բոլորովին այլայլեցաւ, և 1815
 ամին արուեստական կարգաւորութեան
 յաջողոգէց ազգութեան սկզբունքն, որոյ
 յաջողութիւնն մեր ժամանակաց կնիքն է:

Չարմանալի եղած է Գաղղիոյ բախտը:
 1815ին յետ այն աստիճան խոնարհելու
 մինչև յանձն առնուլ ընդունել իր յաղթո-
 ղաց տուած կառավարութիւնը, և յետ
 թողլու հռենոսեան փափաքելի սահմանա-
 գլուխը, անընդհատ յուզմամբն ուրիշներէն
 աւելի նպաստամատոյց եղաւ զարթուցանե-
 լու ազգութեան հոգին: Աւստրիոյ գերիշ-
 խանութիւնն 'ի Վերմանիա և յիտալիա՝
 փուշ մ'էր աչքին. վրէժխնդիր իրեն ազ-
 գութեան վրայ, չէր ուզէր այլոց ազգու-
 թեանց ձևացումը: Կ'ուզէր բոլորն էլ զԱւ-
 ստրիա թէ Ալպեան և թէ Հռենոսեան կող-
 մանէ. բայց անկարելի եղաւ ասիկա, մա-
 նաւանդ թէ դարձաւ 'ի մնաս իրեն:

Ալպանիոյ ներկայ վիճակն ազգու օրինակ
 մ'ըլլալու է Գաղղիոյ: Այդ վատաբախտիկ
 երկիրն ինչպիսի մեծութեան հասեր էր
 երբեմն և ինչպիսի վիճակի մէջ կը գտնուի
 հիմա: Երբեմն Եւրոպիոյ ամենէն բարե-
 բախտ ժողովուրդն կը համարուէր, և հիմա
 ամենէն զժեբախտն ու անկարողն է. նա որ
 կը պարծէր թէ իր տէրութեան սահմանն
 անծայրափակ է, հիմա առարկայ եղած է
 բոլոր ժողովրդոց ցաւակցութեան: Ալա-
 նիոյ զանձերն անսպառելի կը համարուէին
 և բանակն անպարտելի, իսկ հիմա զանձն
 սպառեցաւ և բանակն անկերպարան վի-
 ճակ մ'առաւ: Կարոյոս Հինգերորդ՝ եր-
 ջանկութեան ծայրը հասուց զԱլպանիացիս,
 որուն մահուանէն ետքը միշտ կաղ 'ի կաղ
 զնաց այդ ազգն: Ասկէց դար մ'առաջ ո՛վ
 կրնար գուշակել Ալպանիոյ ներկայ ողորմ
 վիճակը, բայց եթէ սրատես քաղաքագի-
 տի մ'աչքը:

Փիլիպպոս Բ. որդի և յաջորդ Կարոյոսի
 Հինգերորդի, կուչեցաւ և ոչ յանիբաւի՝ Տե-
 բերիոս Ալպանիոյ: Ինչպէս որ Կայսրն Տե-

բերիտս շիջոյց 'ի Հռովմ' բոլոր քաղաքական ազատութեան մնացորդները, և պատրաստեց հռովմէական կայսերութեան անկում մը, նոյնը բրաւ և Փիլիպպոս Բ: Ի զոր ջանացին 'ի հինն Հռովմ' արք մեծահան. ճարք փլուեան ազգատոհմին՝ բուժել և կանգնել Տէրութիւն մը՝ որ կը դիմեր 'ի կորուստ, նոյնպէս և 'ի Սպանիա ընդ վայր ջանաց նոր Թագաւորական սերունդն կենդանացնել զպատասցեայն քաղաքական թոքախտիւ: Դարուս սկիզբը թէպէտ ցուցուց Սպանիա կայծ մի կենաց Նարոյէտնի գէմ տուած պատերազմաց մէջ, բայց խաբէական էր այդ կայծն, կրակ մ'էր մագական: Ազգաց ազատութիւնն յառաջ է քան զանկախութիւնն նոցա. եթէ նուազի ազատութիւնն՝ փճանայ և անկախութիւնն. և Սպանիացիք մինչդեռ կը պարծէին թէ խորտակեցին Նարոյէտնեան հսկայն, ամենին չէին մտածեր որ 'ի զին անկախութեան գործեցին զայն: Յաղթեցին, բայց օգնութեամբ Անգղիոյ. օգնութիւն խորհրդոյ, օգնութիւն զրամոյց և օգնութիւն զօրաց, որով վաճառեցին իրենց անկախութիւնը:

Եւրոպա հիմա ուրիշ բան չէ՝ բայց եթէ ընդարձակ զինուորական բանակեւոյց մը, որոյ մեծազօր ազգերն կը հանեն 'ի ճակատ միլիոնաւոր զօրքեր: Սպանիա միայն չունի բանակ, և նշաւակ եղած է աւազակութեանց ու խառնակութեանց. ամեն կողմ արհաւիրք, ամեն կողմ աւեր և կոտորած: Ամենայն որ կը հրամայէ և ոչ որ կը հնազանդի, ամենայն որ ուզածն կ'ընէ, և չըկայ իշխանութիւն որ կարենայ նուաճել ու պատուհասել զոճիրս և զհզուանագործութիւնս: Չի յիշուիր պատմութեան մէջ ասոր նման անիշխանութիւն մը:

Ինչո՞ւ այս ամենայն բաներն. ազգային հպարտութեան և արուեստական գերիշխանութեան համար: Սպանիա և Գաղղիա կը փնտռեն ձեռք մը որ կանգնէ զիրենք. բուական է առ այն յարմարութիւն նորոց ժամանակաց և պիտոյից, հետեւելով ժողովրդոց բնական բերմանը, որ է ազգային սպասութիւն նիւթական և բարոյական:

